ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼԻ ՊԱՇՏՈՆԻ ՀԱԿԻՐՃ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1. Գործառույթներ.

Բաժնի պետի տեղակալը՝

1. համակարգում է վարչական, քաղաքացիական գործերով Ծառայության շահերի, կատարողական վարույթով հարկադիր կատարողի շահերի ներկայացումը ՀՀ ընդհանուր իրավասության, մասնագիտացված, վերաքննիչ, վճռաբեկ դատարաններում.
2. համակարգում է Ծառայության ղեկավարին ուղղված վարչական բողոքների վերաբերյալ որոշումների նախագծերի նախապատրաստման աշխատանքները.
3. համակարգում է կատարողական վարույթների շրջանակներում անձանց գործողություններին քրեաիրավական գնահատական տալու առնչությամբ համապատասխան հաղորդումների նախապատրաստման աշխատանքները.
4. համակարգում է հայցադիմումների, վերաքննիչ և վճռաբեկ բողոքների նախագծերի կազմման գործընթացը.
5. համակարգում է հարկադիր կատարման ոլորտին առնչվող իրավական ակտերում փոփոխություններ, լրացումներ կատարելու գործընթացը.
6. իրականացնում է Հայաստանի Հանրապետության սահմանադրական և վճռաբեկ դատարանների որոշումների ուսումնասիրություն, համեմատաիրավական վերլուծությունների և օրենսդրական բարեփոխումների մշակման աշխատանքներ.
7. համակարգում է Ծառայության ղեկավարի կողմից այլ պետական մարմիններին, ֆիզիկական և իրավաբանական անձանց ուղղված գրությունների նախապատրաստման գործընթացը.
8. ըստ հանձնարարության իրականացնում է դատական ներկայացուցչություն.
9. իրականացնում է Ծառայության արտաքին կապերի հետ կապված գործառույթներ.
10. համակարգում է և իրականցնում է Ծառայության ստորաբաժանումներին և հարկադիր կատարողներին իրավաբանական խորհրդատվության տրամադրման աշխատանքները.

2. Պաշտոնին ներկայացվող պահանջները.

Հարկադիր կատարման ծառայության իրավաբանական բաժնի պետի տեղակալի պաշտոնում կարող է նշանակվել այն անձը, որն զբաղեցրել է գլխավոր հարկադիր կատարողի կամ տեղակալի կամ հարկադիր կատարման ծառայության գլխավոր խմբի պաշտոն կամ առնվազն երկու տարի՝ առաջատար խմբի պաշտոն կամ ունի հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ պաշտոնի անձնագրով պահանջվող աշխատանքի բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:

Պաշտոնի կարող է նշանակվել իրավագիտություն մասնագիտությամբ բարձրագույն կրթություն ունեցող անձը: